ՏԵՂԵԿԱՆՔ

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ԼՐԱՑՎՈՂ ԴՐՈՒՅԹԻ

Հոդված 30. Ապացուցողական գործողություններին և դատական նիստերին ձերբակալված կամ կալանավորված անձի մասնակցությունն ապահովելը

(վերնագիրը փոփ. 15.06.22 ՀՕ-249-Ն)

Ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը, քննիչի, դատարանի (դատավորի) հանձնարարականով, ապահովում է՝

1) ձերբակալված կամ կալանավորված անձանց ընդունելը և այլ վայրեր փոխադրելու համար պահակախմբին հանձնելը.

2) ապացուցողական գործողությունները, ինչպես նաև ամբուլատոր դատահոգեբուժական և այլ փորձաքննություններ անցկացնելու համար ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի տարածքում համապատասխան տարածքներ կամ շինություններ տրամադրելը:

Ձերբակալված կամ կալանավորված անձանց ապացուցողական գործողություններից կամ դատական նիստերից ազատելն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Դատարանի կողմից ձերբակալված կամ կալանավորված անձանց մասնակցությունը դատական նիստին տեսահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ (տեսակապի միջոցով) ապահովելու մասին որոշում կայացվելու դեպքում ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմն ապահովում է պահման վայրից ձերբակալված կամ կալանավորված անձի մասնակցությունը դատական նիստին: